

Հ. ԴԱՆԻԷԼ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ծն. է Կ. Պ. 1856 † է Լն., 1931 Օգ. 22

Վոսիորի ափերուն ծաղկներէն, սիրահար սրբագոյն կեանքի, 12 տարեկանին Ս. Ղազար թոած էր. և տաս տարի վերջ քահանայ 1878ին:

Երկար կեանքը մինչեւ երջանիկ անցքը դէպի երանութիւն՝ անձնուէր կերպով միշտ ի սպաս դրաւ իր Ուխտին բարգաւաճման:

Ի սկզբան իրերէ ուսուցիչ և դաստիարակ Մ. Ռ. Վարժարանին մէջ, ապա ի վանս, յետոյ իբրեւ հայր և խնամակալ 1896ի կոտորածներէն



փրկուած հայ որբերուն՝ Ռեքանաթիւ մէջ, ինչպէս մատակարար, դաստիարակ և մեծաւոր Կ. Պոլիս և այլուր:

Եղած է նաեւ ընդհանուր մատակարար և Ուխտիս Վարչութեան անդամ:

Իր բազմազբաղ և բարդ կեանքին մէջ միշտ մշակած է գեղարուեստի գիտութիւնը՝ որուն այնքան ճաշակ և հասկցողութիւն ունէր:

Ֆրանսացիէ և իտալացիէ մ'աւելի հմուտ էր անոնց լեզուներուն: Գիտութեանց և գրական նութեան սիրահար՝ աշխատակից եղած է Բագմալէպին, կատարած է թարգմանութիւններ:

Իբրեւ հեղինակութիւն կը թողու ընդհ. աշխարհագրութեան դասագիրքը և դեռ նոր հրատարակած հայ-գաղղ. բառարանը զոր իր կարասի երգը կ'անուանէր, ինչպէս որ եղաւ իսկ:

Վանական ընկերութեան համեմն էր իր սրամիտ գուարթաբանութիւնը, ինչպէս սիրալիր և ախորժելի էր իր վարմունքն ու խօսքը աշխարհի չորս կողմերէն Ս. Ղազար այցի եկողներուն՝ որոնց առաջնորդն էր ի պաշտօնէ, և զորս գիտէր այնպէս շուտով հմայել:

Աստուածասէր և բարեպաշտօն քահանայ՝ նոյն նուիրումը և ձգող ձիրքն ունէր ամէն անոնց որ զինքն իրենց հոգեւոր հայր ընտրած էին:

Որպէս մխիթարութիւն՝ իր անբասիր կրօնաւորի օրինակը կը մնայ մեզի կրկնապէս շահաւէտ, ինչպէս իր աղօթքը երկնքէն՝ ուր անշուշտ զինքը ստակած է արդ վարձահատոյցն Յիսուս:

Հ. ԱՆԴՐԵԱՍ Վ. ՎԱՐԴԱՔՈՒՐԵԱՆ (ԿԻԼԵՍԵՐ)

Ծն. է Կ. 1865 † Ս. Զեռ., 1931 Օգ. 24

Ինքն ալ ծաղիկ հասակէն նուիրուած Ուխտի բուրաստանին՝ կը քահանայանար 1888ին, երկար տարիներ աշխատելով հայրենի գաւառներուն մէջ ի Կուտինա, յետոյ Պարտիզակ, Նիկոմիդիա, Կ. Պոլիս առաքելական ասպարէզին մէջ, և որպէս մատակարար մեր Վարժարաններուն և կալուածներուն:

Խոնարհ կեանքը զոր ապրեցաւ՝ շինարարութեան ծաղիկը փթեցուց, որուն մէջ որքան համեստ նոյնքան աշողակ, ճարտար, գիւտաւոր և ճաշակաւոր էր:

Իր մահկանացուն կնքեց մեր ամարանոցին մէջ ի Ս. Զենոն, ուր կը ճգնէր տասը տարիներէ ի վեր բուժելու արկածով խախտած առողջութիւնը: Զղային տկարութիւնը սակայն հիւանդութենէ մենաշնորհի կը փոխուէր շրջակայ



գիւղերուն համար, որոնց անթիւ աղբիւրներ և ջրհորներ յայտնած էր իր թաքուն արուեստով՝ առանց զլանալու հոգեւորն ալ. ատոր վկայ սուրբ ժողովրդեան որ կրկնապէս երախտագէտ խոտներամ իր թաղման հանգիսին մասնակցեցաւ աղօթքով ու ծաղկներով:

Խոնարհամտութեան և գուարթ ընկերակալութեան հետ մեզի յիշատակ կը մնան մեր տուններուն և տաճարներուն մէջ իր թողած արուեստի և բարեպաշտութեան գործերը:

Երանութիւն իր հոգեւոր արդարներու հայրենիքին մէջ:

ԽԲԲ.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ (Շար.)

	Էջ
ԳԱՒԻԹԵԱՆ Յ. — Ճամբաները և անոնց յեղաշրջումը	373
» Այց մը միջազգային Գաղթ. ցուցահանդէսին ի փարիզ	376
ԽԲԲ. — Ամսօրը ի հանդէսներ Մխիթարեան վարժարաններուն մէջ. վեհեակ - փարիզ (Սեւր)	379
» Ուս. Եօրկայի համալսարանական Հաստատութեան Ուսուց. մարմինը ի Ս. Ղազար	381
» Ուխտի հանգուցեալ Հայրեր	383

SOMMAIRE (Suite)

	P.
Davidian A. — Les routes et leur evolution	373
» L'Exposition Coloniale (à Paris)	376
Réd. — Solennités de fin d'année aux Collèges Mékhitaristes, Venise - Sèvres (Paris)	279
» «Uniria prin cultural» du Prof. Jorga visite St. Lazare	381
» Nécrologie (P. Denis Galatousov, P. Daniel Stepanian et P. Andrée Vartapour)	383

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԳԵՂԱՄ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. — Տարօճի աշխարհ, պատկերներ ու պատմութիւններ. հր. «Նհուկ. Գրգր. Բրկմ.», Թ. 3, Փարիզ, 1931, էջ 340:

ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ. — Արեւելիկական գործը, արձակ էջեր, պատմութիւններ ու գանաչ. հր. «Ն. Գ. Բ.», Թ. 4, Փարիզ, 1931, էջ 254:

ՄԱԼԻԱՍ. — Ապրումներ. Ա. հատոր. Տպ. «Հայրենիք», Պոսթըն, 1931, էջ 511. գին՝ 3 տոլար:

ՌԵՆ. — Գեղականարաւորներ. վէպ Ռուսա-կան մեծ յեղափոխութիւնից. Փարիզ, 1931, էջ 272. գին՝ մէկ տոլար:

ԱՐՈՎԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ. — Ողբ հայրենասիրի ԱՐՈՎԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ. — Ողբ հայրենասիրի (վէրք Հայաստանի). պատմական վէպ. Գ. տպ. Հ. Կոչարեան (Արեւ), Կ. Պոլիս, 1931, էջ 316. գին՝ 200 դրուշ:

ՊՕՂԱՍԵԱՆ ՅՈՎՀ. — Երկու տիւս Հայաստանի մէջ. տպ. «Պայքար»-ի, Պոսթըն, 1931, էջ 500:

ՍՕՅԵԱՆ ՎԱՀՐԱՄ. — Քիւ մը երկիրը (քերթումներ). տպ. Նիւ Եօրք, 1931, էջ 60. գին՝ մէկ տոլար:

ԳԵՐԳ ՄԵՍՐՈՊ. — Հայկական (Պարբերա-գիրք). Մեթոդեան ճեմարան, Բաւոլոյ - Սոփիա. տպ. Պալլոգեան. գին՝ 200 լեւ, 50 ֆրանս. ֆր. կամ 2 տոլար:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ԸՆԿԵ-ԲԱՅՈՒԹԻՒՆ. — Նիւրա Եօրք (Իր ծնունդեան 60ամեակին տոթիւ). Մխիթ. տպ. վիեննա, 1931:

ՇՐՁԻԿ. — Վաղեհի առաքելալը. Տպ. «Աղ-դարար», Կ. Պոլիս, 1931:

ՊԱՏԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ. Թ. 4. Պանոս. Մարգ մը սրճափ հողի պէտք ունի. պատմը-ւածքներ Տոլսոյէ. թրգ. Լեւոն Պ. Գալէմբարեան. հրատ. «Սահակ Մեթոդ» տպագրատան, Գահրէ, 1931, էջ 35:

ՊԱՏԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ. Թ. 5. Պանոս. պատկերազարդ աւանդակէլ Ն. Հաւթհորնէ, էջ 31:

ՊԱՏԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ. Թ. 6. Եղիա, փորրերու խմատուրիւնը, Չար ողիկ ու հացի կտորը. պատմ. Տոլսոյէ. թրգ. Լ. Պ. Գալէմբարեան, էջ 32:

ՊԱՏԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ. Թ. 7. Միտաս. (սոկի փոխող հալումը). պատմ. Ն. Հաւթհորնէ. թրգ. Լ. Պ. Գալէմբարեան, էջ 24:

Կարգ Սրբոյ Պատարագի (Հայ Կաթողիկէ արքեպիսկոպոսական թեմին ի Լեմպերկ). Հր. Արքեպ. Յովսէփ Թէոփիլէ Թէոտորովիչ, 1927, էջ 43:

KARST JOSEPH. — Geschichte der Armenischen philologie in kritischer beleuchtung nach ihren ethnologischen zusammenhängen dargestellt.

Mit beilagen und eskursen über die Asia-nisch-Mediterranische vorgeschichte. Heidel-berg, 1930, էջ 211.

MESROVB J. SETH. — Agah Catchick Arakiel. A loyal and an eminent armenian merchant of Calcutta in the second-half of the 18th century. Calcutta, 1931, էջ 14 (մեծադիր):



